Միսաք Մեծարենց

Իրիկվան ձայներ

Կ’ալեկոծին տարփոտ ձայներն իրիկվան,
հորձանքին մեջ հոգնակոհակ հովերուն.
անրջածուփ, նըվաղ բույրերն երերուն
վերջալույսին մեջ ոսկեզօծ՝ կը հևան:

Խըրախության աղաղակներ հեշտալուր՝
կը պլլըվին այդ ցնծաձայն նըվագին.
ու կ’անհետին՝ մեջն այդ ծըփուն հորձանքին՝
հեշտերգության թույլ ծըվեններ կցկըտուր:

Ջիլ գեղգեղներ ու նըվագներ վրդովիչ,
ու ջութակի սարսուռին գիծը կարմիր…
Արևմարքին ծաղիկն, որ չի թառամիր,
ինքն ալ գինով ըզգլխանքեն այս թովիչ:

Աղմըկահար սույլն ու արշավն հովերուն,
հծծյունները ծաղիկներուն խատուտիկ,
բարդիներու խարշափն ու ծափն հանդարտիկ,
և համերգը խանդոտ՝ գետին մոլորուն:

Կըստվարանա ալիքն հրճվոտ այս ճիչին,
ու կը բախի հոգվույս պորփյուր քարափին,
ու կ’ոռոգե զիս փրփուրին մեջ ծըփին

երբ խնկագույն լույսերն ինձմե կը փախչին:

Արծաթ լույսերն հիմակ տակավ կը ծաղկին,
ու կը ցայտե թավ հեծեծանքն ուտերուն,
լազվարթ ժամեր լուսնի շիթ շիթ կաթիլքին
մեջ կը թրթռան իրենց համբույրն անանուն…:

Եվ հոգիներ կ'իյնան անոնց ծնրադիր,
սիրերգությանց ըմպած հըմայքն հըրեղեն.
պայեր անոնց միստիք ճամփան կը պեղեն.
ու կը ցնծան լույսով՝ զենիթ ու նատիր:

Ու կը բացվի փալփլուն՝ գիշերն երջանիկ,
արձագանգներ կը խաղան դեռ հոս ու հոն.
քերթված մըն է ցայգն համորեն, ջինջ գեղոն՝
որ կ'երփներգե ծափ ու ծիծաղ ու ծաղիկ: